Հավելված N 1
ԲՏԱՆ-ԳՀԱՇՁԲ-2023/03 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

գնանշման հարցմանը մասնակցելու

«ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից «ԲՏԱՆ-ԳՀԱՇՁԲ-2023/03»
պատվիրատուի անվանումը

ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1 չափաբաժնին և հրավերի պահանջներին
չափաբաժնի համարը

համապատասխան ներկայացնում է հայտ:

«ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:
երկրի անվանումը

«ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ -ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02253748 .
  հարկ վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ prothermllc@gmail.com .
  էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք Երևան, 0026, Արշակունյաց փող․ շ. 30 բն. 36 .
  գործունեության հասցեն
- հեռախոսահամարն է՝ 055 73 11 33 .
  հեռախոսի համարը

Սույնով «ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանումը

1) «ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ -ն և իրեն փոխկապակցված անձինք
մասնակցի անվանումը

բավարարում են «ԲՏԱՆ-ԳՀԱՇՁԲ-2023/03» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ -ն պարտավորվում է ընտրված
մասնակցի անվանումը

մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում

2) «ԲՏԱՆ-ԳՀԱՇՁԲ-2023/03» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ -ին
  մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) «ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ -ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ -ին
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

Ստորև ներկայացնում է «ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ-ի իրական շահառուների
մասնակցի անվանումը

վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ https://www.e-register.am/am/companies/1319851/declaration/664d2f58-e1ca-4ccb-be03-37562c2c662e

«ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ, տնօրեն, Հրաչյա Մարտիրոսյան ____________________
(Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ( ստորագրությունը)

Կ. Տ.

---

***- մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը, եթե այդ մասնակիցը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ է և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ սահմանված կարգով պետք է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված լիներ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները,*

*- եթե մասնակիցը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում- հայտարարությունը լրացնելիս << տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ >> բառերը փոխարինում է <<հայտարարագիր՝ համաձայն հավելված 1. 3-ի>> բառերով,*

*-եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ ֆիզիկական անձ, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացնում:*

**** պարբերությունը և հավելված 1.1 հանվում են, եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական աշխատանքներ*

# ԵՆԹԱԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 01/23

ք. Երևան «23» մարտ 2023թ.

«Պրոթերմ» ՍՊԸ –և, ի դեմս տնօրեն Հրայր Մարտիրոսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ-և, ի դեմս տնօրեն Արարատ Մարկոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Գորիսի, Գյումրիի և Վանաձորի կայանների հողանցման համակարգի չափման ծառայությունները (այսուհետ՝ ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար։

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան։

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է փաստացի աշխատանքները սկսելուն պես 45 օր: Աշխատանքների կատարման մեկնարկը սկսվում է Պատվիրատուի կողմից աշխատանքները սկսելու օրվանից։ Մինչև աշխատանքների մեկնարկը Կապալառուն պետք է իրականացնի նախապատրաստական աշխատանքներ՝ սույն պայմանագրով սահմանված փաստացի աշխատանքները կատարելու համար:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով և միջոցներով (բացառությամբ նյութական ծախսերը):

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը։

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը,

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում կամ ժամկետից շուտ աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները։

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում կամ ավելի շուտ աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան,

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.8 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ որոնք կապված չեն նյութի որակի հետ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը :

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և հաստատում է հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և գրավոր ձևով տեղեկացնում է կապալառուին չստորագրման պատճառների վերաբերյալ: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

---

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին՝ պատվիրատուի կողմից հաստատվելուց հետո (այդ թվում աշխատանքների վաղաժամկետ կատարման դեպքում) մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,005 (զրո ամբողջ հինգ հազարերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,005 (զրո ամբողջ հինգ հազարերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ոչ բարենպաստ եղանակային պայմանները, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում փաստացի աշխատանքները սկսելու պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

8.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.8 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Պրոթերմ» ՍՊ ընկերություն
ՀՎՀՀ՝ 02253748
Հասցե՝ ք.Երևան, Արշակունյաց 30/36
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
հ/հ 1930059227890100

Տնօրեն՝ Հ. Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Դավիթշին» ՍՊ ընկերություն
ՀՎՀՀ՝ 00455925
Հասցե՝ ք. Երևան, Նուբարաշեն 9/20
„Հայէկոնոմբանկ" ԲԲԸ
Հ/Հ 163548004296

Տնօրեն՝ Ա. Մարկոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

( ԿՐԿՆՕՐԻՆԱԿ )
12.04.2019թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 15548
(լիցենզիայի համարը)

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝
(ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ)
(գործունեության տեսակը)

Տրված է « 30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2012թ.» « ՊՐՈԹԵՐՄ » ՍՊԸ Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՆՑ 30 Շ., ԲՆ. 36
(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ **ԱՆԺԱՄԿԵՏ**

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝

(ստորագրություն) Կ.Տ.

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ
(անուն, ազգանուն)

(ԿՐԿՆՕՐԻՆԱԿ)

12. 04. 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

**ՔՊԼ N 15548 - 01**

(լիցենզիայի և ներդիրի համարները)

« ՊՐՈԹԵՐՄ » ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՎԻԳԵՆ ՄԻՇԱՅԻ ԱՂԴԱԼՅԱՆ 001850734

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ

(գործունեության ոլորտը)

30. 10. 2012թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրությունը)

Կ. Տ

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ

(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼԻՑԵՆԶԻԱ

**15214**

(լիցենզիայի համարը)

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
(ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ)

(գործունեության տեսակը)

Տրված է «24 հոկտեմբերի 2011թ.» « ԴԱՎԻԹՇԻՆ » ՍՊԸ ք. ԵՐԵՎԱՆ, ՆՈՒԲԱՐԱՇԵՆ, 3-րդ փող., 27 տուն

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ **ԱՆԺԱՄԿԵՏ**

**ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ** Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

## N 15214 - 01

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ԱՐՄԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ AE 0517321

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ

(գործունեության ոլորտը)

24.10.2011թ.

(տալու ամսաթիվը)

...ՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

...ԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝

(ստորագրությունը)

Կ. Տ.

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

(անուն ազգանուն)

...իրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

# N 15214 - 04

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՎԻՏԱԼԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ AE 0513965, ՂԱԶԱՐ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ AH 0260317

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ

(գործունեության ոլորտը)

29.10.2015թ.

(տալու ամսաթիվը)

ՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝

(ստորագրությունը)

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

(անուն ազգանուն)

իրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

## N 15214 - 03

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ԳԵՎՈՐԳ ԱՂԱՍԻԻ ԻՍՐԱԵԼՅԱՆ 000696716

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ

(գործունեության ոլորտը)

28.04.2017թ.

(տրման ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ԿԱ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ (ստորագրությունը) Ն. ՍԱՐԳՍՅԱՆ (անուն ազգանուն)

Կ.Տ.

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

Digitally signed by MARTIROSYAN HRACHYA 3712760299
Date: 2023.03.25 17:09:28 AMT